

14. 20 Ապր. 1782. Վենետիկ, Աստուածատուր Տնկրոեան գրէ առ Հ. Մինաս ի Թր., որ Վենետացի Հալք կը սպասեն Գր. Պատրիարքին Կ. Պոլսոյ՝ գալստեան, որ գրեր է թէ օդերը մաքրուելուն՝ ճամբայ կ'ելլէ, եւ թէ Հ. Ներսէս Անքօնա գացեր է զինքը բերելու:

15. 4 Յունիս 1789. Գր. Պատր. Պասմաճեան յԱնգօնա առ Եղիայեան Յովս. ի Թր. "գիր սիրելութեան ձերոյ... մայիս ամսոյ 26ին եհաս առ մեզ Թր. ի յԱնքօնայ. զի որովհետեւ մեք ելեալ էաք ի Վենետիկոյ ի յապրիլի ամսոյ 16ին վասն գալոյ մերոյ ի յԱնքօնայ եւ բնակել մեզ աստ հարկաւոր եղեւ. որոյ պատճառն է վասն ծանրութեան ծխացն եւ յերկրին այն խոնաւուտ եւ գիճային գոլն. արդ ըստ ամենայնի յորդորիչ ցաւոցն եւ տկարութեան, ըստ մերոյ դիտմանն. ուստի ի յայս պատճառացս հաճեցաք վերադառնալ մեզ աստ զի հիւանդութիւն մեր ոչ բաւեաց առ ի տանիլ յամենայն կողմանց: Վասն որոյ գիտութեամբ եւ հրամանաւ սրբոյ Ժողովոյն դարձաք եւ եկաք ի յայս քաղաք, որպէս էաք յառաջագոյն զի ըստ որում յառաջագոյն զփորձ աստէն առեալ եմք թէ զըրոյն եւ զօգոցն, եւ լինի թէ զմնացեալ սակաւուկ զառօրեայ կեանս մեր աստ անցուցանիցեմք, եւ զայն բարի մահուամբ եւ խաղաղութեամբ որպէս զուսահոգի Ղազար եպիսկոպոսն, որ աստ հանգեաւ եւ վճարեաց զկեանս իւր, զոր Տէր լուսաւորեսցէ զհոգի